	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>	<b>TC 01-09#6</b>		
	<b>«ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ (ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ)</b>	<i>Խմբագրման ամսաթիվ 02/07/19</i>	<i>Խմբագրություն 5</i>	<i>էջ 1/2</i>

Ուժի մեջ է 2019թ. հուլիսի 10-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ  
«ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ  
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան \_\_\_\_\_


8 հուլիսի 2019թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿՐԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից կենսաթոշակառուների սպասարկման համար գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

3. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում և մատուցված ծառայությունների դիմաց վճարումներ է ընդունում գործառնական/աշխատանքային օրվա ընթացքում: Գործառնական/աշխատանքային օրը Բանկի մասնաճյուղերի համար սահմանվում է Երևանի ժամանակով ժամը 9:30-ից-16:30-ը, իսկ հեռահար սպասարկման, ներառյալ՝ ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) համար՝ 9:00-ից 18:00-ն, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում կամ այլ ներքին իրավական ակտերում: Հեռահար սպասարկման, ներառյալ՝ ՖԳԻԱՍ-ների, միջոցով քարտային հաշվով գործարքների կատարման համար գործառնական/աշխատանքային օրը սահմանվում է 24 ժամ 7 օր, բացառությամբ՝ քարտին կցված վարկային գծի մարման գործարքի:

4. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

	<b>ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ</b>		<b>TC 01-09#6</b>	
	<b>«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱԿԱԳՆԵՐ (ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ)</b>		<i>Խմբագրման ամսաթիվ 02/07/19</i>	<i>Խմբագրություն 5</i>

Հ/Հ	Ծառայության տեսակը	Առավելագույն սակագինը
1.	Ընթացիկ (քարտային) հաշվի բացում և սպասարկում	անվճար
2.	Քարտերի թողարկում և տրամադրում	անվճար
3.	Ընթացիկ (քարտային) հաշվից միջոցների կանխիկացում (ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ սպասարկման կետերում)	անվճար
4.	Քարտային հաշվից միջոցների կանխիկացում (այլ բանկերի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող սպասարկման կետերում)	0.5%
5.	Քարտի բլոկավորում և ապաբլոկավորում (քարտապանի պահանջով)	անվճար
6.	Բանկոմատի միջոցով քարտի առգրավման դեպքում (ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿԻ և այլ բանկերի սպասարկման կետերում) քարտի վերադարձ	անվճար
7.	Քարտի փոխարինում (քարտը կորցնելու, ՊԻՆ կոդը մոռանալու և այլ դեպքերում)	առաջին դեպքի ժամանակ այս ծառայությունը մատուցվում է անվճար, իսկ հետագայում՝ 700 ՀՀ դրամ
8.	Քարտային գործարքների վերաբերյալ ամսական քաղվածքի տրամադրում	անվճար
9.	Անկանխիկ վճարումներ	անվճար
10.	Քարտային հաշվի մնացորդի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
11.	Վարկային գծի օգտագործման և/կամ հաշվի առաջացած գերաձախսի դիմաց հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	- առանց գրավային ապահովվածության՝ 19.5%-21% - գրավային ապահովվածությամբ՝ 18%-21%
12.	Հաշվին մուտք եղած գումարների տրամադրման/հասանելիության ժամկետ	առավելագույնը հաջորդ աշխատանքային օրը
13.	Թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարների կանխիկ վճարում (առանց Շահառուի ընթացիկ կամ քարտային հաշվին մուտքագրվելու)	անվճար
14.	Թաղման նպաստի և կենսաթոշակառուի մահվան պատճառով չստացված կենսաթոշակի գումարների կանխիկ վճարում Շահառուի կողմից նշված ընթացիկ կամ քարտային հաշվին մուտքագրվելուց հետո	համաձայն տվյալ պահին Բանկի կողմից կանխիկացման համար սահմանված միջնորդավճարի հետո

Ն. Հովհաննիսյան	Ն. Նազարյան	Ս. Զաքինյան	Ա. Մելքոնյան	Գ. Դարբինյան
Ռ. Սարգսյան	Ա. Մելքունյան	Ի. Ապկարյան	Լ. Գևորգյան	Զ. Սարգսյան
Ս. Իրիցյան	Հ. Հակոբյան	Ս. Հովհաննիսյան	Է. Հայրապետյան	Ա. Սարգսյան